



Գործարարական համայնություն

Դադիվանք
և անդին

Hanging Garden
Dadivank & Beyond



Assiria

ARTHIA

populi de parthia
nente haueno lon
li. sity. unde poi p
a sotomesseno gr. n.
te prouicie che li era
o. p modo che le seno
e dicuano essi i pchia
a nò hano tãta opinio
er tal dominio.

Queli de
seruono
che niuue
e babilon
sia uname
dema eite
de. predeu
grande e
ron a iql
baltame che
colomeo
li reche

Ninuue
destruira
Assiria

Armenia
maçor ARMENI

nelle prouicie
no molto de
tate ple cõmune
ueri fano tur
domani

SOLTANIA

Curas mag thami
Antia e fil reuente de
sia e lo za grando vno dugu
m de laqual terreatio ne re
tina va poi pla p tãterla
lo quito qm si a nobilitato. e d
go in qste pre questa esse. Nam la citate
de fusi anse se dice alexandro colosse la
barata cõ dario. tal precente el fol
de chasaful ne signor. e quella e
ne larmina gorda.

Armenia

p. Siroan.

In qsta puicia de siroan naseno
Le pme se chiamano siechi. e qste sono basse. le se
gonde chanarui. e qste sono mior. le tergo sono
dite thalai. e queste sono optime. e naseno
i qsto potesene che qui
de soto. e fido ma
mutaua.

S. ROAN Siamachi

questa prouicia
anticha nize se di
con alba
nia

Quis sono do



Արցախը գրկաբաց է դիմավորում իր լեռնաշխարհով զբոսնողին: Լեռներ, որ պարուրված են գետերով, ծածկված անտառներով, մրգաստաններով ու խաղողի այգիներով: Արցախի լեռնային բնապատկերները, անդնդախոր կիրճերը շունչը կտրելու չափ առինքնող են:

Արցախ տեղանունը հիշատակվում է բազմաթիվ հնագույն աղբյուրներում¹: Արցախ տեղանվան ծագումնաբանությունը վիճաբանության թեմա է լեզվաբանության և տեղանունների մասնագետների շրջանակում²: Ժամանակներից մինչև օրս այս տարածքի բազմաթիվ անվանումների մեկնությունները շեշտադրել են դրա աշխարհագրական առանձնահատկությունները լեռնաստան, այգի, անտառային գոտի, պարտեզ: XIV դարում պարսկական տիրապետության օրոք, տարածքը ստանում է Ղարաբաղ անունը. **kara**-ն (կարա) թուրքերեն նշանակում է «սեւ», իսկ **բլե**-ը (բաղ) պարսկերեն նշանակում է «այգի»: Խորհրդային տարիներին ինքնավար շրջանը վերանվանվում է **Нагорный Карабах** (Լեռնային Ղարաբաղ): **Нагорный**-ն (նագոռնի) ռուսերեն նշանակում է «բարձր» կամ «լեռնային»: Ղարաբաղ տեղանունը հիշատակող առաջին եվրոպական քարտեզը ստեղծվել է Վեներտիկով 1460 թվականին վանական Ֆրա Մուրոյի կողմից:

Բազմազան ռելիեֆ ունեցող այս տեղանքի երեք չորրորդը կազմում են լեռնաշղթաները: Արցախի հյուսիս-արեւմուտքում է հայկական բարձրավանդակի Մռավ լեռը, որը Հայաստանում գտնվող Սեւանի լեռնաշղթայի արեւելյան շարունակությունն է: Լեռնաշղթայի երկարությունը մոտ 70 կմ է: Մռավ լեռան անտառապատ լանջերին 1100 մ բարձրության վրա Թարթառ գետի ձախ ափին է գտնվում Դադիվանքի վանական համալիրը, որը հայկական միջնադարյան ճարտարապետության գոհարներից մեկն է (IX-XIII դդ.):

Քարվաճառի շրջանում երկնուղեշ այգու խորքում խարսխված այս վանքի կարգավիճակը փոփոխվել է դարերի ընթացքում եւ տարբեր վարչակարգերի օրոք:

2020 թվականի նոյեմբերի 13-ին երեւանի արվեստագետների մեր արշավախմբով Դադիվանք ենք մեկնում արտակարգ իրավիճակի թելադրանքով:

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ 44-օրյա պատերազմին (2020-ի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը) հաջորդած եւ Ռուսաստանի միջնորդությամբ կնքված հրադադարի համաձայնագրի ստորագրումից մի քանի օր է անցել: Արցախի Քարվաճառի բնակչությանը տարհանում են. մի քանի օրից շրջանն անցնելու է Ադրբեջանի տիրապետության տակ՝ Արցախի այլ շրջանների հետ մեկտեղ, որ կորսվել են պատերազմի հետեւանքով: Սակայն հայկական Դադիվանքը, թվում է, հատուկ կարգավիճակ ունի. ռու-

1 Արցախ տեղանվան վկայությունը՝ Արծախ հնչատարբերակով տեսնում ենք հայ պատմագրության մեջ: Ըստ Բիզանդի Պատմության IV դարի երկրորդ կեսին «ամուր գաւառն Արծախայ» բաժանվեց Մեծ Հայքից (Փաստոս Բիզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 314): Եղիշեն նույնպես հիշատակում է Արծախ անունը՝ երեք անգամ (Եղիշէ, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 72, 97, 99):

2 Ըստ մի շարք լեզվաբանների (Գ. Ղափանցյան, Տ. Դալայան), Արցախ տեղանվան մեջ -ախ մասնիկը տեղանվանակերտ վերջածանց է: այն հնագույն բնիկ վերջածանցներից է, որը հանդիպում ենք Արցախ, Աթախ, Շատախ, Քաշախ, Կարծախ և այլ տեղանուններում: Իսկ արց- արմատի ավելի հին տարբերակը պետք է եղած լիներ արծ-: այն նույնպես հնագույն ենթաշերտային արմատ է, որի նշանակություններն, ըստ Տ. Դալայանի, բավական լայն են եղել, բայց պահպանվել է արծան, արծագանք բառերում:

13.11.2020

Round Trip Երկկողմանի Համարորդություն

On Tuesday, November 10, 2020, upon waking, everyone understands by reading the news that Dadivank is in an area that is to be "ceded" within a few days.

2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ երեքշաբթի, փնից արթնացանք ու լուրերից իմացանք, որ Դադիվանկը, հանձնվող մյուս քարածվերի հետ, մի փանի օրից անկնելու է Ադրբեյջանի վերահսկողության տակ:

Google maps - From Yerevan to Dadivank 229Km estimated travel time 3h31 | This itinerary is provided as an indication(...)

What to do? Go and say goodbye to Dadivank? Is this a ridiculous idea? Will everyone have the same idea? Whom to go with? What to do? Burn a candle? No way! Cry? No! Come up with a ceremony, a pilgrimage? Why not...

Ինչ անել: Գնալ Դադիվանկի հրաժեշտ տալու: Ժի՞շ անել ի՞նչպե՞ս: Արդյո՞ք բոլորի մտքով հույ՞ն բան է կանգնել: Ո՞ւ՞մ հետ մեկնել: Ի՞նչի՞ համար: Մո՞տ վառելու թաղի՞ն ո՞չ: Լալելու՞ն, ո՞չ: Իսկ եթե արարողություն կամ ուխտագնացություն հորինվե՞ր: Ի՞նչն է ո՞չ:

"Going there now, knowing that we're going to give it away? No, thanks. Just like all those people who are going to whine about Historic Armenia, no, no, no."

«Գնալ՝ իմանալով, որ հանձնվելու է: Ո՞չ, չէրիս կալուքի՞ն: Գնալ, ինչպե՞ս գնալ ե՞լ Սարճիկ պարմական հայաքանի լալելու: Ո՞չ, ո՞չ, ո՞չ...»:

Եթե ձեզ ասեմ. «Պետք է փրկել բնությունը», դուք առանց մտածելու կ'ասեք. «Այո, այո, իհարկե», - եւ կ'անցնէք ավելի կարեւոր գործի:

Բայց եթե ձեզ ասեմ. «Պետք է պաշտպանել ձեր տարածքը», այ, այդ դեպքում դուք արագ իրար գլխի կ'հավաքվէք: Դուք արդէն մեկնում եք ռազմաձակատ՝ ասելով. «Իհարկե, բնական է ինքն իրեն պաշտպանելը, նույնիսկ կենդանիները, ի վերջո, պաշտպանում են իրենց տարածքը»:

Ահ, տես է, հետաքրքիր է. ձեզ բնական է թվում սեփական տարածքը պաշտպանելը, բայց բնությունը պահպանելը ոչ: Ինչից է զգայականության այս տարբերությունը:

Նրանից, որ բնությունը հիմնականում այն է, ինչին նայում ենք դիմացից, ապակու հետեւից, որպէս ներկայացում կամ բնապատկեր: Տարածքը լրիվ ուրիշ բան է. այն է, ինչի վրա դնում ենք ոտքերը, այն, ինչից կախված ենք, այն, ինչը կորցնելու մտքից դողում ենք, այն է, ինչին յուրաքանչյուրը գիտի, որ պետք է ծայրաստիճան խնամքով վերաբերվել:

Այսինքն երկու բնապատկեր կա. այն, որին դիմացից եք նայում, հեռվից, եւ այն մյուսը, որի մեջ գտնվում եք եւ որը ձեզ պահում է: Այստեղից էլ հաջորդ հարցը. արդյո՞ք իրոք գիտեք, թե ինչից է կազմված բնապատկերը, որին պետք է հոգ տանեք: Մինչեւ ո՞ր է ձգվում: Որո՞նք են նրա սահմանները: Ովքե՞ր են զբաղեցնում եւ կյանքով լցնում դա:

Եվ այստեղ առաջին անակնկալն է ի հայտ գալիս. դուք մեծապէս դժվարանում եք հնարավորինս ճշգրտորեն նկարագրել պաշտպանելիք տարածքը:

Ինչ անել: Դուք անհրաժեշտ գործիքներ եք ձեռք բերում, որ հետապնդեք, որսաք, հետք գտնեք, ակոսեք այն, ինչի ճշգրիտ սահմանները չեք ճանաչում: Այդտեղ էլ երկրորդ անակնկալը. բնությունը, որ ձեր դիմաց էր, հայտնվում է ձեր ոտքերի տակ եւ պահում է ձեզ:

Բրունո Լատուր

«Կենդանացնել բնապատկերը, ողջերի հետքեր փնտրելիս»

Յուգահանդես Որսի եւ բնության թանգարանում
հունիսի 20, սեպտեմբերի 17, 2017 թ., Փարիզ

Բանաստեղծությունը գրել է Անահիտ Չայրապետյանն իր սոցիալական ցանցում տող առ տող, 2020-ի սեպտեմբերի 27-ից սկսած՝ մինչ ժամերն անցնում էին, մինչ պատերազմը մոլեգնում էր: Յուրաքանչյուր տող առանձին հրատարակություն էր: Տողերի մեծ մասը հայերեն էին. վերջինը նախ տպագրվել է արցախյան բարբառով, ապա՝ թարգմանվել: Փոխակերպումների այս բանաստեղծությունը շատերի համար որպես սկզբնաղբյուր ծառայեց. նրանք իրենց հերթին սկսեցին բանաստեղծական տողեր գրել՝ հետեւելով նախնական ձեւին: Անահիտ Չայրապետյանը կիսվեց իր անձնական էջում դրանցով ու ստեղծագործությունը ձեռք բերեց հավաքական ծավալ, դարձավ ընդհանուր երևակայություն, ընդհանուր պատմություն:

Հով դառնամ, խաղամ ծորերումդ,
Արցախ ջան:

հանդերումդ, Արցախ ջան:

Սերմ դառնամ, ծլեմ հանդերումդ,
Արցախ ջան:

Երթ դառնամ, քայլեմ ճամփեքովդ,
Արցախ ջան:

Ջուր դառնամ, հոսեմ սարերովդ,
Արցախ ջան:

Ծուխ դառնամ, ցրվեմ օդերումդ,
Արցախ ջան:

Օձ դառնամ, սողամ քարերովդ,
Արցախ ջան:

Ցախ դառնամ, այրվեմ
թռնիրներիդ մեջ, Արցախ ջան:

Գիծ դառնամ, ձգվեմ երկայնքովդ,
Արցախ ջան:

Արև դառնամ, բացվեմ երկնքիդ
մեջ, Արցախ ջան:

Ձյուն դառնամ, ծածկեմ սպիներդ,
Արցախ ջան:

Գետ դառնամ, ջրեմ բոստաններիդ,
Արցախ ջան:

Տաղ դառնամ, շրջեմ գյուղերովդ,
Արցախ ջան:

Ցանց դառնամ, ձգվեմ երկնքովդ,
Արցախ ջան:

Ցող դառնամ, շողամ խոտերիդ
մեջ, Արցախ ջան:

Բերդ դառնամ, պահեմ
սահմաններիդ, Արցախ ջան:

Երգ դառնամ, փռվեմ չղերումդ,
Արցախ ջան:

Բուռ դառնամ, հանեմ քեզ
կրակից, Արցախ ջան:

Ծող դառնամ, ցրվեմ լույսերիդ մեջ,
Արցախ ջան:

Ես տաք աղբյուր, սրտից բխեմ,
Արցախ ջան:

Ձուկ դառնամ, լողամ գետերումդ,
Արցախ ջան:

Խելագարվեիք, բան
չհասկանայիք էլի, Կոմիտաս
ջան:

Մեջք դառնամ, հենվես ինձ սյան
պես, Արցախ ջան:

Յորդանը մաջքավդ տամ, քաթ
ասիմ, քոն ինիս, Արցախ ջան:
(Վերմակը մեջքիդ գցեմ, հեքիաթ
պատմեմ, քնես Արցախ ջան:)

Արտ դառնամ, բուսեմ լանջերին
քո, Արցախ ջան:

Լույսդ խաղաղ ա բացվելու,
տղերքդ են քունդ հսկելու:

9 armeniasputnik.am

SPUTNIK

Արմենիա

«Մեր ձեռքով տվեցինք, հետ եկանք...». Դադիվանքի վանահայրը չգիտի՝ ոնց են լքելու վանքը

20:00 10.11.2020 14822



© Photo : Facebook / Դադիվանք Տեր Հովհաննես

Քաժանորդագրվեք Google News

Կարինե Հարությունյան
Հոդված

Դադիվանքի վանահայրը, որն անձամբ է մասնակցել վանքի ազատագրմանը, հիմա փորձում է տեղից խաչքարերը տեղափոխելու հարցով զբաղվել, բայց ամենակարևորը՝ վանքը, տեղափոխման ենթակա չէ:

10



Դադիվանք, նոյեմբեր 13-14, 2020. Լրամբարձ փնտրությունը



Դադիվանք, նոյեմբեր 13-14, 2020. Լրամբարձ փնտրությունը

11 azatutyun.am

Ազատության Ռադիոկայան

Դադիվանքի քահանան պնդում է՝ չի հեռանալու. գյուղում էլ տներն են հրդեհում

Նոյեմբեր 13, 2020
Սուսան Բաղասյան



Այսօր կեսօրից հետո՝ ժամը 2-ին, ռուս խաղաղապահները զրահատեխնիկայի շարայումով

f t ...

12 hy.armradio.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՆ ԴԱՐՈՊ

Դադիվանքը լիքն էր ուխտագնացներով. ԱՅ ՄԻՊ

Լիլիթ Մուրադյան 24 Նոյեմբերի, 2020, 08:39

Մեկ րոպեից էլ քիչ



ԱՅ ՄԻՊ Արտակ Բեգլարյանը Ֆեյսբուքում գրառում է կատարել՝ նշելով, որ այցելել է Զարվաճառ ու Շահումյանի շրջանի մի շարք գյուղեր:

«Երեկ այցելեցինք Զարվաճառ ու Շահումյանի շրջանի մի շարք գյուղեր՝ ծանոթանալու տեղի իրավիճակին:

Ցավալի էր արձանագրել մարդկանց հայրենազրկումն ու զաղթը. նրանցից ոմանք՝ արդեն երկրորդ անգամ՝ Իսկ Դադիվանքը լիքն էր ուխտագնացներով:



Խորհրդային տարիներին 1922-1991 թվականներին, Ղարախքը գտնվել է Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության տարածքում՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից դուրս:

During the Soviet period, between 1922-1991, Dadivank Monastery was on the territory of the Soviet Republic of Azerbaijan, outside the oblast (region with an autonomous status) of Nagorno-Karabakh.



Խորհրդային Միության փլուզումից և 1991-1994 թվականների պատերազմից հետո վանքը գտնվել է Ադրբայջան՝ միջազգային հակրության կողմից չճանաչված ինքնահռչակ հանրապետությունում:

After the collapse of the Soviet Union and the war of 1991-1994, Dadivank Monastery is in the self-proclaimed Republic of Artsakh, not recognized by the international community.



2020 թվականի նոյեմբերի 13-ից՝ 44-օրյա պատերազմից հետո, վանքը գտնվում է Ադրբեջանի Հանրապետության տարածքում՝ Արցախի սահմաններից դուրս՝ այժմ ռուսական խաղաղապահ ուժերի պաշտպանության ներքո՝ նախնական 5 տարի ժամկետով:

Since November 13, 2020, following the 44-day war, the monastery has been on the territory of the Republic of Azerbaijan, outside the borders of the Republic of Artsakh, under the protection of Russian peacekeeping forces for an initial period of 5 years.

